Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<Վանաձորի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 15 հիմնական դպրոց>>

Թեմա՝<<Ուսուցման ակտիվ մեթոդները որպես սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց>>

Վերապատրաստող մենթոր՝ Սվետլանա Դալլաքյան

Ուսուցիչ՝ Նելլի Հովհաննիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն 3

1.Ուսուցման մեթոդների ընդհանուր բնութագիրը..... 4

2. Ուսուցման ակտիվ մեթոդները որպես սովորողների

ներգրավածության բարձրացման միջոց.....7

3.Դասի պլան.....11

4.Եզրակացություն.....16

5.Գրականության ցանկ 17

Ներածություն

Ուսուցիչը դասերի ընթացքում օգտագործում է դասավանդման տարբեր մեթոդներ, որոնց միջոցով ուսուցման պրոցեսը կարելի է դարձնել ավելի արդյունավետ:

Մեթոդ-ը հունարեն բառ է, որն շանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Ուսուցման մեթոդների վերջնական և ամբողջական բնութագրում դեռևս չկա: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Բազմազամյա աշխատանքային փորձը ցույց է տվել, որ ուսուցիչն ընդհանրապես և տարրական դասարանի ուսուցիչը մասնավորապես պետք է անընդհատ կատարելագործվի, քայլի ժամանակի հետ, նորացնի ու թարմացնի դասավանդման մեթոդներն ու միջոցները: Անելիքները բավական շատ են և բազմաբնույթ: Ուսուցիչը պետք է կարողանա հմտորեն իրագործել ծրագրային պահանջները՝ ապահովելով լեզվական կարողությունների և խոսքի զարգացման հարցը: Յուրաքանչյուր աշխատանքի կատարման հիմքում պետք է տեսնել խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման խնդիրը: Ուսուցման ակտիվ մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Թեմայի արդիականությունը պայմանավորված է ուսուցման ակտիվ մեթոդները դասի ընթացքում ճիշտ և տեղին օգտագործելու և դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով.

Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտը կամա թե ակամա դառնում է դասապրոցեսի մասնակից:

Հետազոտությունները ցույց են տվել, որ

Երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝հիշում եք 10%

Երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝հիշում եք 30%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք հիշում եք 50%

Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը:

Նոր կրթական ռազմավարությունը բերել է նոր մեթոդների, մոտեցումների իրագործմանը՝ ակտիվ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը;

Ուսուցման մեթոդների ընդհանուր բնութագիրը

Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգագործել աշխարհը փոխելու համար։

ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ

Այսօր հասարակական կյանքի արագընթաց փոփոխություններն անձից պահանջում են ցանկացած իրավիճակում ճկուն գործելու, ծագող խնդիրները հաղորդակցվելու միջոցով լուծելու հմտություններ: Ուստի կրթական համակարգում խիստ կարևորվում է սովորողների ակտիվ ճանաչողական, խոսք և հաղորդակցում վարելու կարողության ձևավորումը:

«Ուսուցման մեթոդը» ուսուցչի և աշակերտի հետևողական, փոխկապակցված գործողությունների համակարգ է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը:

Յուրաքանչյուր ուսուցիչ ամեն մի դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առջև.

•Ինչպե՞ս հաջող պլանավորել դասը

•Ինչպե՞ս հաջող իրականացնել դասը

•Ինչպե՞ս կանխատեսել արդյունքները

•Ինչպե՞ս հասնել նպատակներին

•Ինչպե՞ս վերլուծել հաջողությունները ու բացթողումները:

Ուսուցման մեջ անձի գործունեության խնդիրը հոգեբանական, մանկավարժական գիտության և կրթական պրակտիկայում ամենահրատապներից մեկն է: Ուսուցման մեջ անձի գործունեության դրսևորման մակարդակը որոշվում է նրա հիմնական տրամաբանությամբ, ինչպես նաև կրթական մոտիվացիայի զարգացման մակարդակով, որը մեծապես որոշում է ոչ միայն անձի ճանաչողական գործունեության մակարդակը, այլև անձի ինքնատիպությունը:

Ուսուցման մեթոդները կատարում են շատ գործառույթներ: Դրանցից գլխավորներն են՝ ուսուցողական, մոտիվային, զարգազնող, դաստիարակչական, կազմակերպչական գործառույթները: Դրանց օգնությամբ ուսուցիչը ուսուցանում, լուծում է մոտիվացիայի հարցերը, իրականացնում է դաստիարակչական ազդեցությունը, ազդում է ուսումնադաստիարակչական պրոցեսի կազմակերպման վրա: Այսպիսով, ուսուցման մեթոդը դրված նպատակին հասնելու ճանապարհն է: Ուսուցման մեթոդները կազմված են եղանակներից՝ առանձին միանգամյա գործողություններից: Մեթոդի մեջ հստակ կերպով առանձնանում են օբյեկտիվ և սուբյեկտիվ մասերը: Այնտեղ,

որտեղ մանկավարժը մեթոդի մեջ ներդնում է կոնկրետ փոփոխություններ, արտահայտվում է նրա ստեղծագործությունը:

Ուսուցչի մասնագիտական կարողությունների և բազմազան մեթոդների իմացության և դրանք կիրառելու, համադրելու հմտության շնորհիվ ուսումնական նյութը դառնում է ոչ միայն հետաքրքիր, այլև՝մատչելի: Կարևորելով դասավանդման գործընթացում ուսուցչի մասնագիտական կարողությունները, միաժամանակ սովորելու և սովորեցնելու հմտությունների և ժամանակակից մեթոդներով աշխատելու փորձառությունը, համոզված ենք, որ այն հնարավորություն է տալիս դասն արդյունավետ կազմակերպելուն և նպաստում է սովորողների՝ դասընթացի նկատմամբ հետաքրքրության աճին: Ժամանակակից մեթոդներով աշխատելը հնարավորություն է ընձեռում կրթական միջավայրի ստեղծմանը և սովորողների կողմից լեզվական գիտելիքների ինքնուրույն յուրացմանը:

Ժամանակակից մանկավարժագիտության մեջ մեթոդների դասակարգման հիմքում ընկած են տարբեր մոտեցումներ. Դրանք երբեմն դասակարգվում են ըստ ճանաչողության աղբյուրների,առանձին դեպքերում դասակարգումը կատարվում է ըստ գիտելիքներ ձեռք բերելու միջոցների, ուսուցչի և սովորողի գործունեության բնույթի: Հաճախ հանդիպում են բացատրական-ցուցադրական, վերարտադրողական, մասնակի որոնողական և հետազոտական համարվող տարբերակումները: ԽԻԿ համակարգի պարագայում ընդունվում է ըստ դասի կառուցվածքային փուլերի դասակարգումը:

Ուսուցման մեթոդներն այսօր կարելի է բաժանել 3 տեսակի՝

1. Պասիվ՝երբ հիմնական գործող դեմքը ուսուցիչն է, աշակերտը հանդես է գալիս պասիվ լսողի դերում:
2. Ավանդական՝ դասարանը հենվում է այն ենթադրության վրա, որ ուսուցումը միայն ինտելեկտուալ գործընթաց է:

3. Ակտիվ, աշակերտ – ուսուցիչ փոխգործակցությունն է, երբ ուսումնառության ժամանակ սովորողները հանդես են գալիս ոչ միայն պասիվ լսողի դերում, այլև ուսուցիչ – աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա է գտնվում
4. Վիգոտսկու, Պիաժիեի և մյուսների կարծիքով միմյանց հետ միմյանցից սովորելն էլ ավելի մեծ հնարավորություն է ընձեռում ակադեմիական գիտելիքները ընդլայնելու և խորացնելու համար՝ որքան ավելի շատ են խոսում, այնքան ավելի լավ են սովորում:
5. Ինտերակտիվ- շատ հեղինակներ նույնացնում են ակտիվ մեթոդների հետ, բայց այն ավելի շատ կարելի է դիտել ակտիվ մեթոդների ժամանակակից արտահայտման ձև: Շատ ժամանակ անվանում են փոխներգործուն մեթոդ, որը և ապահովում է սովորողների ներգրավվածություն:

Ուսուցման ակտիվ մեթոդները որպես սովորողների ներգրավածության բարձրացման միջոց

Ակտիվ ուսուցման մեթոդներն շանակում է ուսուցում գործունեության մեջ:Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքումը նկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և ուսանողների միջև, այնպես էլ իրենց, ուսանողների միջև:Երկխոսության ընթացքում զարգանում է հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է ուսանողների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է ուսանողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռքբերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռքբերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայությունը և այլն:

Ուսուցմանարդյուն ավետությունը մեծապես կախված է յուրաքանչյուր դասի արդյունավետությունից: Առանց լավ մտածված մեթոդների դժվար է ապահովել ծրագրային նյութի իմացությունը: Դրա համար էլ անհրաժեշտ է օգտագործել այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք կօգնեն ներգրավել աշակերտին սովորելու աշխատանքին, կօգնեն նրան ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, կզարգացնեն մտածողությունն ու երևակայությունը:

Կան ուսուցմանակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ:Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում:Այսպիսով, երբեմն ԱՈՒՄ հասկացությունը ընդարձակում են՝դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն: Կոնկրետացնելով, դրանք ամբողջական կրթական միջոցառման, կամ է լառարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, չնայած, իհարկե, այդ ուսուցման ձևերի սկզբունքները կարող են օգտագործվել դասի առանձին մասերը անցկացնելու համար: Ուսուցման ակտիվ մեթոդները–մեթոդներ են, որոնք նպաստում են աշակերտների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: Ուսուցման ակտիվ մեթոդները բնութագրվում է սովորողների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական- արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից:

Ուսուցման ակտիվ մեթոդները – մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի 9 յուրացման գործընթացում ապահովում են սովորողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ

ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:

Ուսուցման ակտիվ մեթոդները հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, սովորողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: Ուսուցման ակտիվ մեթոդի կիրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից:

Ուսումնական դրական խթանի ձևավորում

•Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում.

•Կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավում.

•Ինքնագործունեության խթանում,

•Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն

• Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,

•Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,

•Սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,

•Սովորողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում

•Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել ուսանողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.

•Համախմբել դասախոսության ընթացքում ձեռքբերված նոր գիտելիքները,

•Կատարելագործել արդեն ձեռքբերած մասնագիտական հմտությունները,

•Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների

համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ ուսանողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռքբերում՝ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործ են գործունեության այս ձևը՝համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը:

ԱԿՏԻՎ ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿ

Առարկան- անգլերեն

ՈՒսուցիչ_Ն. Հովհաննիսյան

Թեման Կրկեսը

Նպատակ

1. Խոսքային լսողության զարգացում

2. Բանավոր խոսքի զարգացում

3.Ստեղծագործական ճգնաժամի զարգագցում

4 .կրկեսը դիտարկել տեսանկյուններից

5.Ծանոթանլ կրեսի դրական բացասական զգայական զարգացող եվ մի շարք փաստերի մասին

6.Տարբերակել եվ թվարկել վայրի և ընտանի կենդանիներին:

Վերջնարդյունք

Երեխաները ծանոթանալով և օգտագործելով Բոնոյի 6 գլխարկները մեթոդ, կկարողանան արտահայտել շատ մտքեր և փաստեր, միևնույն ժամանակ վեր հանել, ստեղծել նոր մտքեր և գաղափարներ: Այս մեթոդը կիրառելով նրանց մոտ հարցեր առաջացան՝ օրինակ թափառող շների վերաբերյալ, որոնց պատասխանները կարողացան գտնել ինքնուրույն : Օգտագործելով այս մեթոդը հնարավորություն տրվեց նույն նյութի մասին տեղեկությունները և կարծիքները դիտարկել տարբեր տեսանկյուններից և վեր հանել նյութն ամբողջությամբ:

Մեթոդներ Բոնոյի 6 գլխարկները

Ուսումնական միջոցներ	գրատախտակ, պաստառներ, քարտեր
Դասի տիպը	Բաց դաս
Դասի ընթացքը	Ամբողջ դասարանը բաժանվում է 5 խմբի: Սպիտակների խումբ՝ որոնք ներկացնում են կրկեսի մասին փաստեր: Սևերի խումբ, որոնք ներկայացնում են կրկեսի բացսական կողմերի մասին, դեղիններ՝ որոնք ներկայացնում են կրկեսի դրական կողմերի մասին: Կանաչներ՝ որոնք ներկայացնում են կրկեսի զարգացող կողմը և վերջապես կարմիրներ՝ որոնք ներկայացնում են կրկեսի զգայական կողմը:Կապույտ գլխարկը ուսուցիչն է, որը ղեկավարում և ներկայացնում է դասարանը:

Վեց գլխարկների մեթոդը, մշակել է անգլիացի գրող, հոգեբան և ստեղծագործական մտածողության մասնագետ Էդվարդ դե Բոնոն, այն մտածողության կազմակերպման առավել գործուն մեթոդներից է հանդիսանում:

Դե Բոնոն մտածողության այս մեթոդի մասին գրել է, իր «Վեց Գլխարկների Մեթոդ» («Six Thinking Hats») գրքում: Գրքում դե Բոնոնն կարագրում է հնարքները, որոնք օգնում են կառուցել, ինչպես կոլեկտիվ այնպես էլ անհատական մտավոր կարողությունը, դարձնելով այն ավելի արդյունավետ և հասկանալի:

Վեց գլխարկների մտածողության մեթոդը թույլ է տալիս զարգացնել մտքի ճկունությունը և կրեատիվությունը, գերազանց օգնում է հաղթահարել ստեղծագործական ճգնաժամը,

օգնում է կայացնել ճիշտ որոշումներ, և ավելի ճիշտ կապակցել ձեր մտքերը, դրված նպատակների ու խնդիրների լուծմանը հասնելու համար: Այն հատկապես լավ է հարմարում անսովոր և նորարարական գաղափարները գնահատելու համար, երբ կարեւոր է հաշվի առնել ցանկացած գաղափար, և իրավիճակը դիտարկել տարբեր հարթություններում: Այս մտածողության եղանակը գործնական խնդիրների լուծման ընթացքում, օգնում է հաղթահարել զգացմունքային, խուճապային և խառնաշփոթության բարդությունները.

Վեց մտածող գլխարկները:

1. Սպիտակ մտածողության գլխարկը՝ դա ամբողջ տեղեկատվության նկատմամբ ուշադրության կենտրոնացման այն ռեժիմն է, որին մենք տիրապետում ենք՝փաստեր նթվեր : Ինչպես նաև, բացի այն տվյալները որին տիրապետում ենք, «հագնելով սպիտակ գլխարկ» կարեւոր է կենտրոնանալ անհրաժեշտ և բացակայող լրացուցիչ տեղեկատվության վրա, և մտածել որտեղից այն կարելի է հայթայթել:

2. Կարմիր գլխարկը զգացմունքների, հույզերի և ինտուիցիայի գլխարկէ: Առանց խորանալու մանրամասների և փաստարկների վրա, այս փուլում արտահայտվում են բոլոր ինտուիտիվ կանխազգացումները: Մարդիկկ իսվում են էմոցիաներով (վախ, զայրույթը, հիացմունք, ուրախություն, և այլն), որոնք առաջանում են այս կամ այն լուծումների կամ առաջարկության մասին մտածելու պահին: Այստեղ նաև կարեւոր է ազնիվ լինել, ինչպես ինքներդ ձեր հետ, այնպես և շրջապատի հանդեպ (եթե առկա է բաց քննարկում):

3. Դեղին գլխարկը պոզիտիվն է: Դնելով այն, մենք մտածում ենք, ենթադրյալ առավելությունների մասին, որը տալիս է լուծումներ, կամ բերում առաջարկներ, մտածում որոշակի գաղափարի օգուտների և հեռանկարի մասին: Եվ նույնիսկ այն դեպքում, եթե անգամ այդ գաղափարը, թե լուծումը առաջին հայացքից ոչ մի լավ բան չեն խոստանում, կարեւոր է մշակել հենց այս, լավատեսական կողմը և փորձել բացահայտել թաքնված դրական ռեսուրսները:

4. Սև գլխարկը՝ դեղինի ճիշտ հակառակն է: Այս գլխարկով մտքում պետք է տալ

իրավիճակի բացառապես կրիտիկական գնահատականը (գաղափարներ, լուծումներ, եւայլն) `ցուցաբերեք զգուշություն, ուշադրություն դարձրեք հնարավոր ռիսկերի և թաքնված սպառնալիքների վրա, գոյություն ունեցող և երեւակայական թերությունների վրա, միացրեք որոգայթների որոնման ռեժիմը և եղեք մի փոքր հոռետես:

5. Կանաչ գլխարկը ստեղծագործական և կրեատիվության գլխարկն է, գտնել այլընտրանքներ և կատարել փոփոխություններ: Դիտարկեք բոլոր տեսակի դրսևորումները, գեներացրեք նոր գաղափարներ, նորարացրեք եղածները և դիտարկեք այլոց մշակումները, մի վանեք ոչ ստանդարտ և սադրիչ մոտեցումները, փնտրեք ցանկացած այլընտրանք:

6. Կապույտ գլխարկ, ` մտածողություն վեցերորդ գլխարկը իտարբերություն մյուս հինգի նախատեսված է գաղափարների իրականացման գործընթացը կառավարելու և խնդիրների լուծման աշխատանքների համար, այլ ոչ թե առաջարկը գնահատելու և դրա բովանդակությունը մշակելու:

Մասնավորապես, կապույտ գլխարկի օգտագործումը մնացած մյուս գլխարկների փորձարկումից առաջ, դա որոշումն է թե ինչ է նախատեսվում անել, այսինքն, նպատակների ձեւակերպումը, իսկ վերջում, 6 գլխարկների մեթոդի առավելությունների և արդյունավետության՝ արդյունքների ամփոփում և քննարկում:

Եզրակացություն

Այսպիսով, ուսուցչի մասնագիտական, առարկայական գիտելիքների կարողությունների մասն են կազմում մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը, որոնք ուսուցման գործընթացի արդյունավետությունն ու ներգրավվածությունն ապահովող կարևոր ուղիներից են, ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտները գիտելիքներ են ձեռք բերում ինքնուրույն ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Դասի ներդաշնակությունը պայմանավորված է ոչ միայն ուսուցչի՝ դասին լավ պատրաստված լինելով, այլև սովորողների՝ ուսման հանդեպ ունեցած մոտիվացմամբ: Իսկ երեխային հետաքրքրելու ու նրան ակտիվ ուսումնառության մեջ ներգրավելու լավագույն միջոցը սովորողների հետաքրքրությունից և նախասիրությունից բխող ուսումնական պրոցեսի կազմակերպումն է: Ակտիվ մեթոդների կիրառման ժամանակ բոլոր աշակերտները մասնակցում են դասին,միևնույն ժամանակ դրանք հնարավորություն են տալիս բացահայտելու յուրաքանչյուրի գիտելիքներն ու իրական կարողությունները: Սակայն ուսուցիչը ևս պետք է ցույց տա իր հմտությունը. նա պիտի իմանա յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները և կիրառի տարբերակված ուսուցում: Հաջողության հասնելով՝ աշակերտը դառնում է ավելի վստահ, մեծանում է ավելին իմանալու և դասին ակտիվորեն մասնակցելու ցանկությունը:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան 2005, 456 էջ;

2. Ավետիսյան Գայանե, Մայրենիի ուսուցման ժամանակակից մեթոդների արդյունավետությանը միտված հարցեր, ‹‹Մխիթար Գոշ››. Գիտամեթոդական հոդվածներ, 1.2019, էջ 76-81; 3.

3. Սարուխանյան Ս., Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր 2008թ, 101 էջ;